

Յայտնապէս կը տեսնուի, որ Մխիթարայ և անոր Հաստատութեան հետ սիրաւոր յարաբերութեան մէջ եղած է Սարաֆեան: Իւր աշակերտը Յովհ. Վ. Նուրտիւնեան ունի Սարգսի վրայ ոտանաւոր ընդարձակ կենսագրական մը, որ Օրթագիւղի Անտոնեանց 'Իււանէն օրինակուելով հրատարակուած է Գալեմբեարեանի գրքին սկիզբը: Հոս մէջ կը բերենք հետեւեալ մէկ քանի տուները.

Ապաքէն Սարգիս հերքեալ փառս պատիր, 1744
Գիւրեալ խիղճ մտացն շնորհիւ երկնածիր,
Հեռացեալ է սպառ յիրաց անյարիր
Վարէր է վընէժ կեանս անգորբաւիր:

Ուր նա զըտանէր զոմանս է Հայոց
Ընդ որս կենակցեալ ոչ հանէր յոգւոց,
Ձի գայնըս խաղաղ նըկատէր է ծոց
Եկեղեցւոյ մօր ուզգափառ որդւոց:

Սակայն սիրտ նորա յաւէտ զուարճանայր,
Երբ երթեալ է վանս կոչեալ Սուրբ Ղազար,

Ձոր դեռ աընտեսէր զերթ քաջ արբահայր
Յոգնիմաստ լարգոյ ուրբին Մխիթար:

Որոց կենակցեալ անկեղծ սերտ սիրով
Այց առնել միմեանց ըզձայնն փութով,
Որով սփոփուր Սարգիս հըրճուելով
Ձօտարութենէն ոչ տըրտընջելով:

Նոյն վանաց ողջոյն միարանց կարգաւ
Ձօնէին նըմա շատ սէր շուք անրաւ,
Ձորոց զոչ լինէր զովութեամբ բազմաւ
Յամենայն աւուր՝ ցօրն յորում հանդեաւ¹...

Վըրթանէս Աւքեպիսկոպոսի թուղթը կը տեղեկագրէ նաև Հայ Եփեսի տօնակատարութեանց մասին քահանայապետական լուսամիտ կարգադրութիւն մը:

Առ գերապատիւ Եղբայր իմ սիրեցեալ ի Քրիստոս Մխիթար Աբբայ Հայր

Յիսուսաւանդ ողջոյն մատուցեալ՝ զեկուցումն առնեմ վերոգրեալ գերյարգելութեան քում, զի զսիրալրական քարտէզն քոյ ընկալայ: Եւ յետ երկուց աւուրց հասանելոյ ինձ քարտիզին, եկն եհաս առ իս Գերապատիւ Եղբայր մեր Սարգիս Վարդապետն. և ըստ յանձնարարական քարտիզի քոյ՝ ընկալաք զնա մեծաւ սիրով և բազում յարգութեամբ և ըստ փոքր կարողութեան մերոյ արարաք նմա պատիւս: Եւ ըստ վայելչութեան անձինն՝ յարդարեցաք զերկուս մեծամեծ սենեակս ամենայն զարդուք և վայելչութեամբ. և այժմ է ի պատուի յոյժ առաջի մեծաւորաց և առաջի մեր ամենեցուն: Շնորհակալ եմ զքէն յոյժ վասն այլմ ճաշոցի, որ այդչափ աշխատեցար ի յուղարկել զայն: Քանզի ի հրամանէ սրբազան Հայրապետին պարտաւորեալ մեր աստ՝ առ ի տօնել զտօնս ամենեկին ըստ սովորութեան հայոց, և ոչ այլ ազգ, ոչ գտանելով ի մեզ ի պատրաստի խորհրդատետր ըստ հայոց, բարուք հաշուեցաք մեք աստ եղեալ կարգաւորքս զճաշոց մի ունիլ. և առնել զայն յերիս մասունս և ըստ պատշաճի աւուրն՝ զգիրք և գաւետարանն ի վերայ նորա ընթեռնուլ, և ըստ այնմ վարիլ՝ վասն ոչ ունելոյ մեր զխորհրդատետր հայոց ըստ ամենայն մասի, և զի, մի մեղիցեն քահանայքն զանազան կերպիւ պատարագս մատուցանելով: Ահա ի մէջ քարտիզիս եղեալ զշնորհակալութեան զիրն՝ աղաչեմ հասուցէք ի ձեռն Պարոն Սահրաթին, և դուք ողջ լերուք ի տէր:

Յամի Տեառն 1745
ի Նոյեմբերի 13
[Հոռով]

Գերյարգութեան քում
Վըրդանէս Վարդապետ
և Աւքեպիսկոպոս

1. Անդ էջ 48. Երբ վեցերորդ: